Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

02. 05. 23

Այսօրվա նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց

վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ սահմանելով **10.75%**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող **լոմբարդային ռեպոյի** տոկոսադրույքը՝ **12.25%**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից **ներգրավվող միջոցների** տոկոսադրույքը՝ **9.25%**

2023 թ. մարտին 12-ամսյա գնաճը կտրուկ նվազել է և ամսվա վերջին կազմել 5.4%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս զգալիորեն նվազել է՝ կազմելով 6.4%

Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկ

Համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունները շարունակում են թուլանալ:

2023 թ. առաջին եռամսյակում պահպանվել են համաշխարհային և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական աճի դանդաղ տեմպերը: ՀՀ գործընկեր երկրներում 12-ամսյա գնաճը շարունակում է նվազել, սակայն պահպանվող բարձր պահանջարկի և աշխատաշուկայից ածանցվող ճնշումների ազդեցությամբ ընդհանուր գնաճային միջավայրը մնում է բարձր:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում կշարունակեն խստացնել դրամավարկային պայմանները: Միջազգային կոշտ ֆինանսական պայմանները նպաստում են ապրանքահումքային շուկաներում գների նվազմանը:

Գնաճը գործընկեր երկրներում, %



Աղբյուրը՝ BIS, Երկրների կենտրոնական բանկեր

Պարենային ապրանքների միջազգային գներ, (2019/12 = 100)



Աղբյուրը՝ www.fao.org

2023թ-ի սկզբին ՀՀ տնտեսությունում պահպանվել է բարձր ակտիվությունը

...որին նպաստել է ծառայությունների և շինարարության ոլորտներում արձանագրված բարձր աճը:

Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2023Q1)



Կապիտալի և աշխատուժի շարունակվող մեծ ներհոսքի, զբոսաշրջության զգալի ակտիվացման և ՀՀ տնտեսությունում եկամուտների ավելացման պայմաններում համախառն պահանջարկը մնում է բարձր:

Ծառայությունների արտահանում, մլն ԱՄՆ դոլար



Մասնավոր հատվածի անվանական աշխատավարձ, տ/տ աճ, %



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկի գնահատական

Իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության, դրամի արժևորման և արտաքին հատվածից գնաճային ազդեցության թուլացման արդյունքում 12-ամսյա գնաճը ՀՀ-ում նվազում է

Քաղաքականության և շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները, %



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Այնուամենայնիվ, բարձր պահանջարկը և գնաճային սպասումները դեռևս շարունակում են նպաստել աշխատավարձերի և առանձին ապրանքախմբերում ու ծառայություններում բարձր գնաճի պահպանմանը

Հիմնական ապրանքախմբերի գնաճ, եռ/եռ տարեկանացված, %



ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

... նպատակահարմար է գտնում քաղաքականության տոկոսադրույքը թողնել անփոփոխ

... հետևողական է լինելու լինելու համարժեք գործողություններով ապահովելու պահանջարկի կարգավորում և գնաճային սպասումների կայունացում

Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն արագորեն կնվազի, առաջիկայում կձևավորվի նպատակային ցուցանիշից ցածր և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:



Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումներ

Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2023թ. մայիսի 17-ը հրապարակվելիք Մամուլի հաղորդագրությունում (Տոկոսադրույքի արձանագրություն)